ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկրում կատարուած վերջին իրադարձութիւնները՝ պետական յեղաշրջման ձախողումն ու ուժերի նոր յարաբերակցութիւնը, քաղաքական իրավիճակի փոփոխութեան են յանգեցրել: Այս պայմաններում կարեւորւում է պետական նոր յարաբերութիւնների ձեւաւորմանը Հայաստանի մասնակցութեան հարցը: Քննարկելով քաղաքական ընհանուր իրավիճակը, վերջին երեք շաբաթների դէպքերի հերթագայութիւնը, գիտակցելով առաջիկայ քայլերի նշանակութիւնը Հայաստանի եւ Արցախի համար՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Հայաստանի իշխանութեան գերագոյն մարմնին է ներկայացնում հետեւեալ նկատառումները.

1. Անընդունելի համարել ԽՍՀՄ պրեզիդենտի եւ միութենական հանրապետութիւնների ղեկավարների համատեղ յայտարարութիւնը ստորագրելու ՀՀ Գերագոյն Խորհրդի նախագահ Լ. Տէր Պետրոսեանի միանձնեայ որոշումը եւ այնուհետեւ Պետական Խորհրդին անդամակցելը: Այս քայլը քաղաքական արմատական որոշում է, ոչ սոսկ յայտարարութեան ստորագրում, ուստի եւ անհրաժեշտ էր ստանալ Հայաստանի ԳԽի հաւանութիւնը:

2.Այսօր քաղաքական իրադարձութեան փոփոխութեան թելադրանքով Հայաստանի ներկայ իշխանութիւնները արդէն իսկ որդեգրել են ՀՅԴ.ի նախանշած խորհրդակցութիւններին մասնակցելու քաղաքականութիւնը: Սա ողջունելի է: Սակայն Հայաստանի իշխանութեան, անձամբ Լ. Տէր Պետրոսեանի միագիծ, համառ, առճակատման միտող քաղաքականութիւնը ծանր հետեւանքներ ունեցաւ: Մենք հայրենիք կորցրինք, տուեցինք բազմաթիւ զոհեր, բռնի տեղահանուեցին 23 գիւղեր, շատ աւելի խորացաւ Հայաստանի եւ յատկապէս Արցախի տնտեսական ճգնաժամը, սոցիալական լարուածութիւնն աւելի սրուեց:

3. ՀՅԴաշնակցութիւնը գտնում է, որ անցումային շրջանի պետական մարմինների ձեւաւորմանը Հայաստանը պէտք է մասնակցի՝ մինչեւ ժողովրդի շահերի եւ հանրապետութեան կամքի արտայայտման հիման վրայ պետական նոր յարաբերութիւնների հաստատումը: Այս իմաստով յոյժ կարեւորւում է Սեպտեմբերի 21ի հանրաքուէն, որի միանշանակ «այո»ի ապահովումը ամենքիս գլխաւոր գործն է:

4. Ինչպէս նախկինում, այնպէս էլ այժմ նոր պետական կառոյցներին մեր մասնակցութիւնը կապում է ամենից առաջ Արցախի հիմնահարցին: ՀՅԴաշնակցութիւնը պահանջում է անցման շրջանի իշխանութեան մարմիններին Հայաստանի մասնակցութիւնը պայմանաւորել Պետական խորհրդի կողմից Արցախի բնակչութեան կեանքի ու գոյքի ապահովութեան երաշխիքների առկայութեամբ, տեղահանուած հայկական գիւղերի վերաբնակեցմամբ, իր ճակատագիրը տնօրինելու Արցախի ժողովրդի իրաւունքի ճանաչմամբ եւ պետական նոր կառոյցներում համապատասխան կարգավիճակով նրա անմիջական ներկայութեամբ:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ